

ԴԵՌԻՎԱՆԻ ԱՐԺԱՎՈՐԾ

59/3

Ն. Գ.



ԻՆՉ Ե ՍՊԵՑԻՖԻԶՄԸ

ՅԵՎ

ԻՆՉՈՒ ՅԵՆՔ ՊԱՅՏԱՐՈՒՄ

ՆՐԱ ՊԵՄ

ՅԿՊ (47.925)

Ի - 61

1928

ՊԵՏԱՐԱԾ

ՅԵՐԵՎԱՆ

26 APR 2013

25 AUG 2005

ԲԱՆԳԱՐԵ-ԳՅՈՒՂԵՑՔԵԿՆ ԳՐԱԴԱՐԱՆ

14 NOV 2008

ՀԿՊ(47.325)

Ի-61

Տպ.

ՎԵՐ ՎԱՐԱՐԱՐԱ ՀԱՅՈՂԱԿՐԴԱՐ

ԻՆՉ Ե ՍՊԵՑԻՖԻԶՄԸ

ՅԵԿ

ԻՆՉՈՒ ՅԵՆՔ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՆՐԱ ԴԵՄ

10.03
1006

1030

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1928



ՄԵՐ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ.

Մեղ հակառակորդ հակահեղափոխական կուսակցությունները հեղափոխության միջոցով պարտության լինթարկվելով, աշխատում են անեն կերպ կազմակերպվել ու խանգարել բանվորների ու աշխատավոր գյուղացիների շինարար աշխատանքը։ Այդ բոլոր հակահեղափոխական, հակակոմմունիստական տարրերը, դաշնակները, մենչենիկները, տրոցկիստները, սպեցիֆիկները խորհրդային իշխանության դեմ պայքարելու ընթացքում կազմել են սիացլաւ Փրոնտ և, իրենց հույսերը կապած սիջազգային բուրժուազիայի հետ, նրա դեկավարությամբ աշխատում են վերականգնել իրենց նախկին տիրապետությունը, բանվորներին ու գյուղացիներին շահագործելու համար։

Մեր լերկրի ներսում այդ կուսակցությունները խորհրդային իշխանության ու կոմմունիստական կուսակցության դեմ պայքարելիս, հենվում են գյուղի կուլակի, քաղաքի նեպմանի, կրօնականների ու ինտելիգենցիայի հակահեղափոխական տարրերի վրա, վարոնք հեղափոխությունից տուժել են, և վորոնց շահերը հակառակ են բանվորների ու գյուղացիների շահերին։

Այդ բավական չե, բանվորների ու աշխատավոր գյուղացիների այդ վոխերիմ թշնամիները, իրենց մոլորին փոխած, զարդարված նոր փետուրներով, բանվոր-

Գրառեպվար 1003 (Բ) Հրատակչ. № 840 Տիրամ 4000

Պետհրատի 2-րդ տպարան Թերևանում Պ. 1056

ներին ու զյուղացիներին ծվատող իրենց ճանկիրն ու ժանիքները թագնելով, նրանց «բարեկամ» են ձևանում և աշխատում են իրենց հականեղափոխական տեսակետները կոնտրարանդ ձեռվ անցկացնել: Ինչու յեն նրանք այդպիս թագնված ձեռվ մեջտեղ զալիս, ինչու յեն նրանք իրենց հին յերգերը նոր ձեռվ նոր շվիների վրա նվազում: Այդ շատ պարզ և հասկանալի յէ, վորովհետեւ բանիլորներն ու գյուղացիները, վորոնք վաղուց ինքնազիտակցության են յեկել, կարող ին ճանաչել դաշնակներին, մենչելիներին, սպեցիֆիկներին ու բոլոր հականեղափոխականներին, նրանց քիթն ու մոռվթը նոյեմբերին ու ապրիլին ջարդեցին ու ամեն լուսի պատրաստ են ջարդելու, զրա համար ել այդ հականեղափոխական կուսակցությունները թագնված ձեռվ են հանդես զալիս:

Կարենորն այն ե, վորպեսզի բանվորներն ու աշխատավար գյուղացիները լով ճանաչեն իրենց թագնված հակառակորդներին, վորպեսզի կարողանան նրանց դիմակները պատռել, վորպեսզի կարողանան արդ հականեղափոխական աղվեսներին, վորոնք աշլորի փետուրներ հազած մութ տեղում հավ վորսալու համար ծուղրուղու յեն կանչում, նրանց կեղծ փետուրները փետել ու պարզել նրանց հականեղափոխական գեմքը: Խոկ այդ զործը կատարելու համար մեր բանվորներն ու աշխատավոր գյուղացիները պետք ե ճիշտ կերպով հասկանան, զոր հեղափոխությունից հետո դասակարգային պարզաբ մեր և մեր հակառակորդների, կուլակների, նեղմանների, բուրժուաների միջն նոր ձեերով, ինչպես ընկ. լենին և տում, շարունակվում և թե քարգաբում և թե գյուղով:

Եկ դասակարգալին պատքարը ներկալումս ավելի բարդ ձեռվ և տեղի ունենում, վորի ընթացքում ավելի զժվար և ճանաչել թշնամուն, վորովհետեւ բանվորներն ու աշխատավոր գյուղացիները մայիսին, նոյնմարին, դաշնակների ավանայուրացի ժամանակ կուլակների ու գաշնակների զեմ կովում եյին ճակատ առ ճակատ, իմանում ելին՝ դաշնակները վորտեղ եյին զիրք մտել, պարզ կերպով լուսմ եյին նրանց կրակոցը և հսրձակվում ելին, կրակում թնդանոթներից, հրացաններից և զնդացիրներից:

Ներկայումս պարտված թշնամին մեր զեմ մեր յերկրի ներսում կովում և խորամանկ ու թագնված կերպով, որինակ՝ կուլակները ձեր գյուղում տնտեսապես ուժեղանալով աշխատում են զանազան խորամանկ միջոցներով քայլացի կոլեկտիվ տնտեսությունը, նույն այդ կուլակներն աշխատում են չամանում, թե գյուղի խանութպանը միացած կուլակների հետ՝ ինչպիսի ոլինրազություններով աշխատում և կոռպերատիվի անդամներին պոկել կոռպերատիվից՝ նիսիա տալով և ալլն: Կամ հաճախ կուլակները չքավոր ու միջակ ձեանալով ինչպես են աշխատում խարել մեր վարկացին մարմիններին վարկ ստանալու համար: Նույն պարզաբ տնտեսության ասպարիզում տեղի յի ունենում նաև քաղաքում: մեր զարգացող պետական արշունաբերության ու կոռպերատիվի զեմ քաղաքում պարզաբ մեր նախմանը, հականեղափոխականը, նախկին զործարանատերերի լակենները, բոլորդ լավ եք հիշում Շախատինսկի զործը և այն կապը, վոր ունելին

Ալլահվերդու գործարանի նախկին ինժեներները գործարանի նախկին տերերի հետ:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր մեր տնտեսության մեջ յիշելու հակառակորդ ուժեր, կապիտալիստականը և սոցիալիստականը իրար գեմ պայքարում են, այդ պայքարի ընթացքում մեր տնտեսության սոցիալիստական տարրերն արագ կիրառով աճում են, բայց միևնույն ժամանակ աճում են նաև կապիտալիստական տարրերը:

Պարզ է, վոր մեր հակառակորդ տարրերը աճածեսպատճելով, տնտեսության սապարիզում մեր գեմ պայքարելով նույնպես գաղափարական պայքար են մզում մեր գեմ: Որինակ վերցնենք ձեր զառադից: լավ եք հիշում, թե ինչպես խորհուրդների վերընտրությունների ժամանակ կուլակները դիմում են բոլոր խորամանկ միջոցների իրենց թեկնածություններն անցլացնելու համար. այդ նպատակով նրանք նախքան ընտրություններն աշխատում են միջակներին, չըավորներին իրենց ազգեցության տակ գցել: Կուլակների, քաղաքի բուրժուաների, հականեղափական ինտելլիցիաների, ձրիակեր կըոնականների, արտասահմանի հայ բուրժուաների շահերի ու ձգտումների արտահայտիչն են հանդիսանում այն հականեղափական կանությունները, վորոնց մասին մենք սկզբում ասեցինք, և վորոնք մեր յերկրից դուրս բացարձակ, իսկ մեր յերկրի ներսում թափնված կիրապով պայքարում են մեր գեմ: Դրա համար բանվորներն ու աշխատավոր գլուղացիները կուլակի, դաշնակի, սպեցիֆիկների ու իրենց բոլոր հակառակորդ հոսանքների գեմ կովելու համար, յերբեք չպիտի մո-

ասնան, վոր այդ հոսանքները գոլություն ունեն, վոր նրանք պայքարում են մեր գեմ, ինարկի, ինչպես աւացինք, թագված կերպով:

Պատահում են մեզանում անկուսակցական, թե կուսակցական կամ կոմիտեիստական բանվորներ և աշխատավոր գյուղացիներ, վորոնք ստածում են այսպիս: «Իշխանությունը մերն ե, հաղթել ենք, վոչ զաշնակ, վոչ կուլակ կամ սպեցիֆիկմի վտանգ գոլություն չունի, վոչ մի գժվարություն չկա, պարագովը լծել ենք ու մի շնչով գնում ենք գեմի կոմմունիզմը»: Կամ թե կան անկուսակցական, կուսակցական և կոմիտեիստական աշխատավոր գյուղացիներ, վորոնց քթի տակ կուլակն ուժեղ թափով աշխատում ե, պայքարում և չքաղաքների, կոպակերախիվի գեմ և այդ գյուղացիները չեն նկատում այդ կուլակին և յերեմնել ընկնում են նրա ազգեցության տակ: Պատահում են չքավոր գյուղացիներ, վորոնց հարցնում են՝ ձեր գյուղում կուլակ գոյություն ունի, նա պատասխանում ե, «Ի՞նչ կուլակ, բոլորս ել չքավոր ու՝ միջակ գյուղացիներ ենք, կուլակի միջքը վաղուց ենք կոուրել, կուլակ գոյություն չունի»: Ազգես մտածողներն այնքան զասակարգալին զիտակցություն ու հոտառություն չունեն, վորպեսզի կարողանան իրենց թշնամուն տեսնել իսկ ով իր թշնամուն չտեսնի և չձանչի նըան, նա չի կարող կովել նրա գեմ ու կընկնի նրա սարքած թակարդը: Դրա համար զիտակից բանվորն ու աշխատավոր գյուղացին, լինեն նըանք կուսակցական թե անկուսակցական, միայն այն ժամանակ կարող են հակառագ պատին չխփել աչքերը փակ թշնամութակարգը չընկնելիքի նըանք նայեն իրենց

շուրջը, ճանաչեն իրենց բարեկամն ու թշնամին, ճանաչեն իրենց գասակարգալին ճակառակորդին նրա դեմ կովկելու համար:

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ ՈՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ.

Դաշնակը, սպիցիփիկը, մենշևիկն ու բոլոր ճանականգի ճականեղափոխականներն ինչպիսի տրեխի հագնեն, ինչպիսի զուռնի տուկ պարեն, Զեմբերլենի թե 2-րդ ինտերնացիոնալի, դա միենուցն ե, նրանք յեղել են ու յեն թթու ազգայնականներ (նացիոնալիստներ),

Ովքե՞ր են նացիոնալիստները, և ի՞նչ ե նացիոնալիզմը. այս հարցի առթիվ նույնպես լուրաքանչյուր բանվոր և աշխատավոր զլուղացի պետք է ունենա պարզ և ուղիղ տեսակետ: Չնայած նրան, վորնացիոնալիստներն իրենց հայտարարում են տմբողջ ազգի շահերի արտահայտիչը, սակայն իրականում նրանք պաշտպանում են միմիայն բուրժուականների, կուլակների ու հարստահարողների շահերը: Նրանք աշխատում են ազգահավաքման և այլ այդպիսի բուրժուական լոգունգների միջոցով խարել բանվորներին, ու աշխատավոր զլուղացիներին, թուլացնել նրանց պայքարը բուրժուաների ու հարստահարողների դեմ: Որինակ՝ մեր ազգայնականները քարոզում են, վոր հայ բուրժուազիալի և հայ բանվորների շահերը միենույն են, վորովհետև նրանք յերկուսն ել հայ և ն ապարտավոր են ձեռք ձեռքի տված պայքարել թուրքի դեմ: Ներկայում ամեն մի բան լոր իր փորձից լավ ճանական ե, վոր բուրժուազիան ինչ ազգի յիշ պատկանելիս լինի, դա միենույն ե, բանվորի վորս-

դիմ թշնամին ն, և նրա ու բանվորի գասակարգալին շահերը տարբեր են միմիանցից: Բուրժուազիան աշխատում ե, վորքան կարելի յե, բանվորին շատ շահագործել, իսկ բանվոր դասակարգը պայքարում ե շահագործմանը վերջ տալու համար: Տարբեր աղղությունների բանվորները վոր թե պիտի պաշտպաննեն իրենց ազգի բուրժուազիալին, այլ ընդհակառակը, միանալով ամբողջ աշխարհի բանվորների հետ, պետք ե պայքարեն բոլոր ազգությունների բուրժուաների գեմ: Որինակի համար՝ նախքան հեղափոխությունը, բագլի նավթահանքերում հայ, վրացի, ուստի թե թուրք բանվորը շահագործվում եր թե հայկական, թե ամերիկան և թե ուստական բուրժուազիալից: Յեվ հենց վոր հայ, ուստի վրացի ու թուրք բանվորները միացած գործադուլ եյին անում, բոլոր ազգությունների բուրժուաները միացյալ ուժերով կովում եյին բանվորության գեմ: Իսկ ճականեղափախական կուսակցությունները՝ գաշնակները, մենշևիկները, նոսկեցիփիկներն ոժանդակում եյին այդ բուրժուազիալին բանվորներին ալելի հետ միջոցով ձնշելու համար:

Ազալիսով մենք տեսնում ենք՝ նացիոնալիստները ալստեղ վոչ թե ամբողջ ազգի պաշտպան եյին ճանդիսանում (վորովհետև ազգը բաժանված է դասակարգերի, ու այդ դասակարգերի շահերը տարբեր են իրարից), այլ միմիայն բուրժուազիալի: Ազգայնականությունը—դա բուրժուազիալի գաղափարախոսությունն ե, վորով նա ցանկանում ե խարել բանվորներին ու աշխատավոր զլուղացիությանը, թուրանվորել նրա գիտակցությունը, նրա դասակարգային պայքարը թուրացնելու նպատակով:

շուրջը, ճանաչեն իրենց բարեկամն ու թշնամին, ճանաչեն իրենց գասուկարգատին հակառակորդին նրան դեմ կովիլու համար։

ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ ՈՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻԶՄ.

Դաշնակը, սպիտեփիկը, մհնշելին ու բոլոր ճանգիւանդի հականեղափոխականներն ինչպիսի տրեխ հագնեն, ինչպիսի զուռնի տակ պարեն, Զեմքերենի թե 2-րդ ինտերնացիոնալի, դա միենույն է, նրանք յիշել են ու յեն թթու ազգայնականներ (նացիոնալիստներ),

Ովքեր են նացիոնալիստները, և ինչ են նացիոնալիզմը. այս հարցի առթիվ նույնպես ցուրաքանչյուր բանվոր և աշխատավոր գյուղացի պետք և ունենա պարզ և ուղիղ տեսակետ։ Զնայած նրան, վորնացիոնալիստներն իրենց հայտարարում են տմբողջ ազգի շահերի արտահայտիչը, սակայն իրականում նրանք պաշտպանում են միմիայն բուրժուաների, կուլակների ու հարստահարողների շահերը։ Նրանք աշխատում են ազգահավաքման և այլ այդպիսի բուրժուական լողունգների միջոցով խարել բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին, թուլացնել նրանց պայքարը բուրժուաների ու հարստահարողների դեմ։ Որինակ՝ մեր ազգայնականները քարոզում են, վորհայ բուրժուազիայի և հայ բանվորների շահերը միենույն են, վորովհան նրանք յիշելուն ել հայ և նա և պարտավոր են ձեռք ձեռքի տված պալքարել թուրքի դեմ։ Ներկայումս ամեն մի բանվոր իր փորձից լավ հասկանում ե, վոր բուրժուազիան ինչ ազգի յիշ պատկանելիս լինի, դա միենույն է, բանվորի վոխե-

րիմ թշնամին ն, և նրա ու բանվորի դասակարգավին շահերը տարբեր են միմիանցից։ Բուրժուազիան աշխատում ե, վորքան կարելի լի, բանվորին շատ շահագործել, իսկ բանվոր դասակարգը պալքարում ե շահագործմանը վերջ տալու համար։ Տարբեր ազգությունների բանվորները վոչ թե պիտի պաշտպանեն իրենց ազգի բուրժուազիային, այլ ընդհակառակը, միանալով ամբողջ աշխարհի բանվորների հետ, պետք ե պալքարեն բոլոր ազգությունների բուրժուաների վեմ։ Որինակի համար՝ նախքան հեղափոխությունը, Բագվի նավթահանքերում հայ, վրացի, ուստի թե թուրք բանվորը շահագործվում եր թե հայկական, թե ամերիկան և թե ուռւական բուրժուազիալից։ Յեվհեննց վոր հայ, ուստի, վրացի ու թուրք բանվորները միացած գործադուլ եյին անում, բոլոր ազգությունների բուրժուաները միացյալ ուժերով կովում եյին բանվորության գեմ։ Իսկ հականեղափախական կուսակցությունները՝ գաշնակները, մինչեկեները, նպացիիկներն ուժանդակում եյին այդ բուրժուազիային բանվորներին ավելի հեշտ միջոցով ճնշելու համար։

Այսպիսով մենք անսնում ենք՝ նացիոնալիստները այստեղ վոչ թե ամբողջ ազգի պաշտպան եյին հանդիսանում (վորովհան ազգը բաժանված և դասակարգերի, ու այդ դասակարգերի շահերը տարբեր են իրարից), այլ միմիայն բուրժուազիալի։ Ազգայնականությունը՝ դա բուրժուազիալի գաղափարախոսությունն ե, վորով նա ցանկանում ե խարել բանվորներին ու աշխատավոր գյուղացիությանը, թունավորել նրա զիտակարգավին պալքարը թուրացներու նպատակով։

Մեր նացիոնալիստական կուսակցությունները լինելով հալ բուրժուազիալի շահերի արտահայտիչը կամ նրա ձեռքին պործիք, այդ հալ բուրժուազիալի շահերի համար անգլիական ու մյուս լերկըների բուրժուաների ղեկավարությամբ մշտական կավի մեջ են յեղել իրենց հարևանների հետ, փոխանակ մեր յերկը խաղաղության ու տնտեսության մասին մտածելու Բոլորը հիշում են հայ բուրժուաների, գաշնակների լոգունգը «միացյալ, անկախ, ծովից ծով, անկախ միացյալ Հայաստան ստեղծելու դողլ գաշնակներին բռնիլ եր վոչ թե նրա համար, վոր նրանք մտածում ելին հայ բանվորի ու աշխատավոր գյուղացիության մասին, այլ բանվորներին ու գյուղացիներին կոտորել ելին տալիս հայ բուրժուաների, շահագործողների շահերի համար: Դաշնակներն ու բոլոր հականեղափոխական կուսակցություններն իրենց հարևաններից մի թիքա հող խելու համար մեր լերկիրը դարձրել ելին հրի ու սրի վայր ու գցել թոփի ու թվանքի բերանը: Եսոր վրաստանի, վաղը Տաճկաստանի, մյուս որն Աղքարեջանի հետ կոիմն անպակաս եր: Նույնը կատարում ելին վրացի մենշեկներն ու թուրք մուսավաթիստներն ու այզպիսով այդ ազգային կուսակցություններն իրենց բուրժուաների շահերի համար կոտորել ելին տալիս Անդրկովկասի տասնյակ հազար բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին:

Եղ գեռ բավական չեր, հենց վոր բանվորն ու աշխատավոր գյուղացին չկարողանալով համբերի, առաստամբում ելին իրենց նախկին «տերերի»՝ գաշնակների, մենշեկների և մուսավաթիստների դեմ, եղ

դաշնակ, մենշեկի ու մուսավաթիստն սկսում եյին բանվորներին ու գյուղացիներին բանտերը լիցնել ու կոտորել, ինչպես, որինակ, մեզանում 20 թ. մայիսյան ապստամբության ժամանակ:

Այսպիսով մենք ահանում ենք, վոր այդ կուսակցությունները լիցել են ազգայնական կուսակցություններ, որինակ՝ գաշնակները խոսել են ամբողջ հայ ժողովրդի անունից, բայց իրականում վոչ իե մտածել են ամբողջ ժողովրդի մասին, այլ հայ ու ոտար բուրժուաների շահերի համար ոգտագործել են բանվորներին ու գյուղացիներին: Ազգ ասելով նրանք հասկանում ելին կուլակներին, բուրժուաներին ու տերերներին, իսկ հայ բանվորն ու գյուղացին նրանց համար կթու կով եր, վորին անխնա շահագործում ելին:

Ի՞նչ և պրոլետարական ինտերնացիոնալիզմը, և ովքեր են իսկական ինտերնացիոնալիստներ: Այս հարցի պատասխանը նույնպես պետք է պարզ լինի բանվորի ու աշխատավոր գյուղացու համար, վորովհետև ազգայնական կուսակցությունները մեզանում – գաշնակներ, մենշեկներ, սպացիֆիկներ, իրենց ազգայնականությունը քողարկելու նպատակով ձեանում են միջազգայնականներ՝ բանվոր զասակարգի ու աշխատավոր գյուղացիների աչքին թող վչելու համար: Իսկական պրոլետարական ինտերնացիոնալիստներ – միջազգայնականներ – նրանք են, վորոնք վոչ միայն իրենց տեսակետներով, այլ նույնպես գործով կանգնած են բանվոր զասակարգի հեղափոխական պակասի տեսակետի վրա ու ղեկավարում են այդ պատքարը, իսկանականական տեսերնացիոնալիստները, բայց կիկներն ընդունում

են, վոր ներկալումն ամբողջ մարդկությունը բաժանված է իրկու հիմնական անհաջար գասակարգերի՝ շահագործող ների ու շահագործվողների, բուրժուաների ու բանվորների, վոր այդ իրկու գասակարգերի միջև գոյություն ունի գասակարգային պայքար, Պրոլետարական ինտերնացիոնալիստները զեկավարվելով մեր ուսուցիչների Մարքսի և Լենինի ուսմունքով, վորը բղխում ե իսկական կյանքի ուսումնասիրությունից, ընդունում են, վոր բոլոր ժողովուրդների շահագործողները, լինեն դրանք անզիմացի, հնդիկ, հայ, վրացի, նեզր կամ թուրք, ունեն միենույն շահերը, միենույն գասակարգային թշնամիները, միենույն գասակարգային նպատակներն ու դրա համար ել նրանք իրենց գասակարգային թշնամիներին հաղթահարելու համար պետք ե միանան ու միացյալ ուժերով իրենց պայքարը մղեն:

Իսկական ինտերնացիոնալիստները վոչ թե կանգնած են ազգայնական, ույսինքն բուրժուական շահերի տեսակետի վրա, այլ գործով զեկավարում են բանվոր գասակարգի ու բոլոր շահագործվողների պայքարը:

Որինակի համար՝ 1914 թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ, իրը բոլոր կեղծ ռազմական ները, իսկ մեղնում սպեցիֆիկները, մենշևիկները, դաշնակները միացած իրենց ազգությունների բուրժուազիա հետ, ոժանդակում ելին իրենց ազգային բուրժուազիան պատերազմի ընթացքում, միայն իսկական պրոլետարական ինտերնացիոնալիստներն ելին լենինի կողմանակիցները՝ բայլեկիկները, վորոնք դեմ ելին իմպերիալիստական պատերազմին, բոլոր

բանվորներին կոչ ելին անում իմպերիալիստական պատերազմը վերածել քաղաքացիական պատերազմի: Թե իրենց տեսակետներով, թե իրենց գործով իսկական ինտերնացիոնալիստներ Մարքսի ու Լենինի աշակերտներ յեղել են ու յին բայլեկիկները, ամբողջ աշխարհի կոմմունիստները, վորոնք կազմակերպվել են Յ-րդ ինտերնացիոնալի մեջ: Իսկ ինտերնացիոնալիզմը բանվոր գասակարգի գաղափարախոսությունն ու գործելակերպն ե, վորն ընդունելով ամբողջ աշխարհի բանվորների շահերի միասնականությունը, կյանքի մեջ իրականացնում ե «Պրոլետարներ բոլոր յերկըների, միացեք» լողունզը:

Վորպեսզի ավելի հասկանալի լինի, որինակներ վերցնենք մեր կյանքից:

Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները բայլեկիկների զեկավարությամբ ձեռք-ձեռքի տված հաղթելով գաշնակներին, մենշևիկներին և մուսավաթիստներին՝ ստեղծեցին ազգային համերաշխություն, վերացրին նախկին վեճերն ու ստեղծեցին Անդրկովկասան ֆեղերացիան: Ի՞նչպես յեղավ, վոր այդ վեճերը, վորոնք գաշնակները, մենշևիկները և մուսավաթիստները կովով, արյունով չկարողացան լուծել, բանվորներն ու աշխատավոր գյուղացիները խաղաղ ձանապահով կարողացան վերացնել, այդ հարցի պատասխանը կարող ե տալ ամեն մի գիտակից բանվոր ու գիտակից աշխատավոր գյուղացի, վորովհետեւ Անդրկովկասի բոլոր ազգությունների բանվորների շահերը միենույն են, հայ, վրացի, թուրք աշխատավոր զբուղացուու բանվորի թշնամիները միենույն են, վորոնց դեմ նրանք միացյալ ուժերով պայքարեցին ու պայ-

քարելու լեն: Միկնուցն ժամանակ բալլէկիլան կուսակցությունը, վորը ղեկավարել եւ ու ղեկավարում եւ սանդորների ու աշխատավոր գլուղացիների պալքարն ընդդեմ բուրժուածների, կուլակների ու բոլոր տեսակի շահագործողների, ինտելինացիոնալիստական կուսակցություն եւ, ալտինքն ալդ կուսակցությունը միացնում եւ ամբողջ աշխարհի շահագործվազների պալքարը շահագործողների դեմ, և նրա համար ազգային խորություններ գոյություն չունեն:

Ներկայումս Անդրկովկասյան բանվորներն ու աշխատավոր գլուղացիները միացած Խուսաստանի բանվորների հետ՝ կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ լծվել են մեր յերկրի սոցիալիստական շինարարությանը: Հայաստանի, Վրաստանի ու Աղքարչանի բանվորներն ու գլուղացիները շահագործողների դեմ առանձին-առանձին չեյին կարող հաջող կերպով պայքարել, վորովհետև տմբողջ աշխարհի շահագործողներն ու հականեղափոխականները բանվորների ու գլուղացիների դեմ միացյալ կերպով են դուրս գալիս:

Թե մեր արտաքին թշնամիները և թե մեր յերկրի ներսում գտնվող թշնամիները, տեսնելով բանվորների ու գլուղացիների իշխանություն հաջողությունը, տեսնելով, վոր մենք մեր շինարարության բոլոր ֆրոնտներում նորանոր հաղթություններ ենք ձեռք բերում ու ավելի ամրանում, կրծտացնում են ատամներն ու բոլոր տեսակի կեղտոտ միջոցներով աշխատում են խանգարել մեր աշխատանքը: Նրանք լավ հասկանում են իրենց գործը և Անդրկովկասի տարբեր ազգությունների բանվորների ու գլուղացիների միու-

թյունը քանդելու, նրանց միջև կապը թուլացնելու նպատակով սկսում են մութ անկյուններում քողարկված ձևով տարածել իրենց ազգայնական տեսակետները: Նրանք նույնն են ասում, ինչ վոր առաջ, բայց վորպեսզի պարզ չենի, թե նրանք իրենց նախկին տաճներն են կրկնում, դիմում են խորամանկությունների: Որինակ՝ վերցնենք կուլակներին, դաշնակ ներին և նեպամաններին, մեզնում նրանք մինչև որս ել, չիրատված իրենց նախկին վորձերից, գնում են Կարսի գրավման, սահմանների լայնացման, 6 վիլայեթների գրավման և «միացյալ Հայաստան» ստեղծելու հարցը: Կա մի այլ որինակ, դաշնակներն ու բուրժուական բոլոր տիպի ինտելիգենտները, թե արտառահմանի կապիտալիստների փշորանքով պահպան իրենց փողոցային թերթուկներում և թե մեզանում աշխատում են խարել, պրովոկացիաներ տարածել, վոր «վրացի կոմմունիստները նացիոնալիստներ են, ազգայնականներ են, վոր այդ կոմմունիստները մտածում են միայն Վրաստանի մասին և փողի մեծ մասը ծախսում են Վրաստանի վրա ու ձնշում են հայ ժողովրդին»:

Նույնը նրանք կրկնում են Ռուսաստանի բանվորության հասցեին, սրանով նրանք հայ ժողովրդի բարեկամներ են ձևանում, բայց իրականում նրա թշնամիներն են, վորովհետև դրանով հանդես են բերում նախկին վոխը վրացի ժողովրդի հանդեպ ու աշխատում են թագանել իրենց թթու նացիոնալիզմը և միենալու ժամանակ վարկարեկել Հայաստանի կոմմունիստներին, վոր իրը թե նրանք հայ բանվոր ու գլուղացու մասին չեն մտածում, վոր նրանք ոտար են հայ բանվորին ու գլուղացուն: Նույնը տառամ են

Վրաստանի մենշկիկներն ու մուսավաթիստները կում-
մունխտների հասցելին:

Մեր բանվորն ու գյուղացիները լավ են հասկա-
նում այդ բոլոր սուս հեքիտթների նպատակը, նրանք
լավ իմանում են, թե ինչպես Հայաստանի, Վրաստանի
և Աղբքեջանի բանվորներն ու գյուղացիները ձեռք-
ձեռքի տված Ծուսաստանի բանվորների հետ՝ փոխա-
դրձաբար ոժտնդակում են իրար տնտեսությունը
սոցիալիստական նոր հիմքերի վրա կազմակերպելու
համար:

Մեր բանվորներն ու գյուղացիները շատ լավ
հասկանում են, վոր իրենք առանց Վրաստանի, Աղբքե-
ջանի և Ծուսաստանի բանվորների չեյին կորող
իրենց տնտեսությունը բարձրացնել ու սոցիա-
լիստական շինարարության համար ստեղծել ալսպիսի
նպատավոր պայմաններ։ Այսպիսով մենք տեսնում
ենք, վոր Հայաստանի կոմմունիստները Հայաստանի
բանվոր ու աշխատավոր գյուղացու ղեկավարներն
են հանդիսանում և նրանց շահերը լավ կերպով
պաշտպանում են բոլոր հարստահարություններից ու
վոտնձգություններից, վորովհետեւ նրանք իսկական
ինտերնացիոնալիստներ են, վորովհետեւնրանք Հայաս-
տանի բանվորի ու գյուղացու շահերը կապում են
ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների
շահերի հետ։

Իսկ ընդհակառակը՝ դաշնակները, մենշկիկները,
սպեցիֆիկները, աղքանականները կովելով Հայաս-
տանի բանվորի ու գյուղացու դեմ, պաշտպանելով
նրան շահագործողներին, միշտ հանդիսացել են հայ-
րությունապետի, կուլակների, տերտերների շահերի

ՀՕՍԴ
14/1


ու ձգտումների արտահայտիչը, լիդելով կապիտալիստա-
կան պետությունների կրունկները։ Անդրկովկասում
հանդիսացել են նրանց ձեռքին գործիք բանվորների
ու աշխատավոր գյուղացիների հեղափոխական պայ-
ճակարը խեղդելու համար։

Մեղանում բանվորներն ու գյուղացիները մասնա-
կցելով սոցիալիզմի կառուցման գործին, հետզհետէ
ավելի խորացած կերպով ըմբռնում են մեծ ու-
սուցիչների Մարքսի, Ենգելսի և Լենինի գաղափար-
ները, բայց կելյան կուսակցության ղեկավարությամբ
ավելի մեծ յեռանդով լծվում են սոցիալիստական
շինարարությանը ու վորովրվում կոմմունիզմի գաղա-
փարներով։

Իսկ մուս կողմից բանվորների ու աշխատավոր
գյուղացիների հակառակորդները, տնտեսության ձա-
կատում պայքարելով մեր դեմ, այդ պայքարն իրենց
կուսակցությունների միջոցով տանում են նաև կոմմու-
նիզմ-մարքսիզմ-լենինիզմի գաղափարների դեմ,
այլ կերպ ասած՝ կոիվ և տեղի ունենում պրոլետարա-
կան ինտերնացիոնալիզմի ու նացիոնալիզմի միջև,
բանվորական գաղափարախոսության ու կուլակների,
բուրժուաների և հականհղափոխականների միջև։

Պարտված նացիոնալիզմն աշխատում ե զանազան
խորամակ ձեռնով իր զունչը զուրս ցցել ու վերա-
կանգնել իր նախկին աղդեցությունը, մանավանդ մե-
րանում նացիոնալիզմը վատնգավոր ե այն տեսակե-
տից, վոր նրա դարձացման համար զոյություն ունեն
վորոշ պայմաններ։

Նացիոնալիզմը մեզմնում հեղափոխության իսկ
վաստակ խոշոր հարված և կայուն առկայություն ունի
անդամական պարտականություն անդամական պարտ-



ված նացիոնալիզմ աշխատում և վերականգնել իր ուժերը և տարբեր ձևերով արտահայտել իրան։ Մեղանում գոյություն ունեցող կուլակը, նեպմանը, հոգմրականությունն ու ինտելիգենցիայի հականեղափոխական շերտերը հանդիսանում են նացիոնալիզմի արտահայտիչները։ Նացիոնալիստական այդ դադարախոսությունը ձևակերպվում է այդ շերտերի վրա հիմնվող հականեղափոխական կուսակցությունների միջոցով։ Բացի այդ հիմնական պատճառներից նաև մեր իրականության մեջ հին ոզգայնական տրամադրությունների մնացորդները, ազգայնական գրականությունը նույնպես այս կամ այն կերպ ոժանդակում է նացիոնալիզմի աշխուժացմանը։ Աշխուժացող նացիոնալիզմը, վորը հանդիսանում է մեր գեմ մզգող հականեղափոխական բուրժուական տարրերի դրոշակը, աշխատում է կաթիլ առ կաթիլ հոսել զեզի մեր կյանքի տարբեր ավազանները։

Դրա համար մեր կուսակցությունը մեզանում նացիոնալիզմը համարում է ամենախոշոր վտանգ, վորի գեմ թե կուսակցական և թե անկուսակցական բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն ամենաանխնա պայքար պետք ե մղեն՝ մեր կյանքի բոլոր ասպարեզներից նրանց դուրս մղելու համար։

Ազգայնականության գեմ պայքարելով՝ մենք հիմնական հարված հասցրած կլինենք բոլոր հականեղափոխական կուսակցություններին ու հոսանքներին (գաշնակիզմ, սպեցիֆիզմ, տրոցկիզմ, հնչակիզմ, ռամկափառություն), վորովհետև այդ բոլոր հոսանքները մեղանում ծնվում են նացիոնալիզմից, կամ նացիոնալիստական հողի վրա փոխադրում են իրար

ու հանդիսանում են այդ նացիոնալիստական ծառի տարբեր ճյուղերը։

Մենք արդեն ասացինք, վոր մեզանում գոյություն ունեցող հականեղափոխական կուսակցություններն ու հոսանքները (գաշնակիզմ, սպեցիֆիզմ, մհնշիկիզմ, տրոցկիզմ) աղդայնական հողի վրա պրոլետարական դիկտատորայի պայմաններում միացյալ Փրոնտ են կազմում բազմեկիզմի գեմ պայքարելու համար։ Դրա համար այդ հոսանքների գեմ պայքարելիս մեր բանվորներն ու աշխատավոր գյուղացիները ձիշտ կերպվ պետք ե ծանոթ լինեն այդ կուսակցությունների ու հոսանքների հականեղափոխական երությանը, վորպեսզի կարողանան նրանց գեմ հաջող կերպով պայքարել։ Ինչպես մենք սկզբում ասացինք, թե գաշնակիզմը, թե սպեցիֆիզմը, յերկուսն ել աղդայնականության ծնունդ են, դաշնակիզմն ավելի կոպիտ, սփափախավոր» նացիոնալիզմն ե, իսկ սպեցիֆիզմն ավելի նուրբ, ուլայած ու «ցիլինդրավոր» նացիոնալիզմն ե, վորն իր իրական դեմքը թագցնելու համար տարիներ շարունակ ծածկվել ե սոցիալիստական քողով։

Սպեցիֆիկները, ինչպես հետո մենք կտեսնենք, մեր կլանքում կատարել են նույնպիս հականեղափոխական դեր՝ լինելով դաշնակների ու հայ բուրժուական գիտի ձեռքին գործիք։

ՈՎՔԵՐ ԵՆ ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉ Ե ՍՊԵՑԻՖԻԶՄԸ.

Վերոհիշյալ հարցին լրիվ կերպով պատասխանելու համար անընդեղա և միքից հեռվից սկսել։ 19-րդ դարի 2-րդ կեսին Անդրկովկասում զարգանում է

արդյունաբերական կապիտալիզմը. զլիսավորապես բազմաւմ, թիֆլիսում և մի շարք գլխավոր քաղաքներում հիմնվում են գործարաններ, առաջանում են գործարանային բանվորություն, վորը. 1900 թվականներից սկսած հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարությամբ սկսում են հետզհետեւ ավելի ուժեղ կերպով պայքար մղել ցարական պետության ու բուրժուազիայի դեմ հանուն իր տնտեսական ու քաղաքական շահերի (1900 թ. մայիսի 1-ի ցուցը, նույն թվի գործադուլը և այլն): 1900 թվին ու հետագա տարիներում բանվորները մի շարք հերոսական ցուցերի, գործադուլների միջոցով դուրս են գալիս հրապարակ ու բայց արձակ կռիվ մղում ցարական ինքնակալության ու բուրժուազիայի դեմ:

Հեղափոխական սոց-դեմոկրատիան ղեկավարում են այդ շարժումը և, անդրկովկասայան բանվորության հեղափոխական պայքարը հաջող ավարտելու համար, սերտորնեն կապվում են Ռուսաստանի բանվորական հեղափոխական պայքարի հետ: Այդ պայքարի ընթացքում Անդրկովկասի տարրեր ազգությունների բանվորները հետզհետեւ ավելի կապվում են իրար ու իրենց պայքարը տանում են ձեռք ձեռքի տված: Հեղափոխական պայքարն ավելի միծ թափ և ստանում 1903 թվին ու հետագա հեղափոխական տարիներում: Ցարական վոստիկանությունն ու լրտեսներն սկսում են իրենց գործը, բաղմաթիվ հեղափոխականներ բանտարկվում ու ձերբակալվում են, սակայն բանվորները, չնայած բոլոր դժվարություններին, շարունակում են իրենց գործը: Ցարական ինքնակալության ու բուրժուազիայի դեմ մղած այդ սուր պայքարի ընթացքում

մեր իրականության մեջ նույնպես առաջանում է մտնելը-բուրժուական համաձայնողականությունը (ոպպորտյունիզմը), վորը կեղծ սոցիալիստական լրզունկներով աշխատում են թուլացնել հայ բանվորության պարբերը, թմրացնել նրա դաստկարգային գիտակցությունը ու նրան կտրել Ռուսաստանի հեղափոխական պրոլետարական շարժումից: 1903 թ. հոկտեմբերին մեջտեղ ե գալիս «սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» (այդպիս ելին կոչում իրենց), վորը շնորհիվ նրան, վոր աշխատում եր հայ բանվորական շարժումն ընդհանուր բանվորական շարժումից կարել դնել ազգային նեղ սահմանների մեջ, պատճառաբանելով, վոր ամեն մի ազգության բանվորությունը գտնվում է առանձնահատուկ (սպեցիֆիկ) պայմաններում, բայց կեների, ընկ. Շահումյանի կողմից ստանում ե սպեցիֆիկ անունը, իսկ այդ հոսանքը կոչվում է սպեցիֆիզմ:

Այսպիսով մենք տեսնում ենք, ինչպես ընկ. Կասպանն ե ասում իր «Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը» գրքում, վոր «սպեցիֆիզմը ազգայնական, մեսչանական յեվ ինելլիգենտական մասնակերպ ե ու գտնելակերպ՝ գունավորված զասակարգային վարդապետությամբ» (Կասպան. «Սպեցիֆիկները ու սպեցիֆիզմը»), այսինքն սպեցիֆիկներն արտահայտում են մասնաբուրժուական ազգայնական ինտելիգենտական մտածելակերպը. ու այդ ուղղությամբ ել գործում ելին, բայց թագնվում ելին սոցիալիզմի դիմակի տակ: Սպեցիֆիկներին յերեք չի հաջողվել վերածվել մասսայական կազմակերպության, վորովհետեւ նրանք թե իրենց տեսակետներով, թե իրենց գործություններին,

անհարազատ են յեղել բանվորությանը: Սպեցիֆիկ-ների կազմակերպությունը բաղկացած է յեղել մեծ մասամբ աշակերտներից, ուսանողներից, արհեստավորներից, հայ տիրացուներից, ազգային ինտելիգենտներից, վարժապետներից. սպեցիֆիկները հաջողություն չեն ունեցել բանվորական կենտրոններում, թե՛կ ունեցել են իրենց հատ ու կենտ կազմակերպությունները Բազվում ու Թիֆլիսում: Նրանց փոքրաթիվ կազմակերպությունները գոյություն են ունեցել գլխավորապես այն գավառներում ու քաղաքներում, ուր ուժեղ է յեղել տիրացուականությունն ու ծխականությունը:

ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՅՈՒԹՅՈՒՆԸ.

Այսպիսի մի համաձայնողական կազմակերպություն, ինչպիսին է սպեցիֆիկների կազմակերպությունը, պարզ է, վոր վոչ մի հեղափոխական դործունյություն ունենալ չեր կարող: Ենթ իսկապես, սպեցիֆիկներն իրենց ամբողջ գոյության ընթացքում աշխատել են արգելք հանդիսանալ բանվորական հեղափոխական գործողություններին, նրանք կատարել են հականեղափոխական դեր ու ծառայել հայ բուրժուազիայի շահերին: Բավական է այստեղ հիշել, վոր յերբ բանվորները Բազվում ու Թիֆլիսում մասսայական գործադրու ելին կազմակերպում, սպեցիֆիկներն այդ գործադրուները համարում եյին «անարխիստական», «վասակար» ու աշխատում ելին այդ գործադրուները վիժեցնել:

Սպեցիֆիկները շատ ելին խոսում դասակարգավին պայքարի, սոցիալիզմի մասին, բայց հենց բանը

գալիս եր հեղափոխական գործին, մատը մատին չեցին խփում, անտեղի «փիլիսոփայություններ» ելին անում

1904—5 թվականների շրջանում, այն ժամանակ, յերբ հեղափոխության ալիքները բարձրանում ելին, բայց կեկները զեկավարում ելին այդ հեղափոխական շարժումը, հայ սպեցիֆիկներն զրադշում ելին բարեգործական ազգային խնդիրներով: Որինակ հայ թուրքական կոտորածի շրջանում նրանք (սպեցիֆիկները) ժողովարարություն ելին կատարում ու հայ բուրժուազիայից փող մուրռում, բանվորներից խմբեր կազմելու, նույն այդ բուրժուազիային պաշտպանելու նպատակով: Կամ հայ թուրքական կոտորածներից հետո նույն այդ սպեցիֆիկները բուրժուազիայի փողերով անգործ հայ բանվորներին տեղավորում ելին նավթարդյունաբերության մեջ, հայ բանվորների դասակարգացին պայքարը թուրացնելով, նրանց դասակարգավին գիտակցությունը մթագնում ու հայ բանվորների շահերը փողով ծախում հայ բուրժուազիային:

Սպեցիֆիկներն այդպես ելին վարվում, վորովհետեւ նրանք դասակարգային պայքար չեյին ընդունում, նրանք կողմանից չելին, վոր ազգի մեջ գոյություն ունեցող բանվոր դասակարգը պայքարի ազգի շահագործողների ու բուրժուաների դեմ, նրանք կանգնած ելին նացիոնալիստական և վոչ թե պրոլետարական հեղափոխության տեսակետի վրա: Այն ժամանակ, յերբ անհրաժեշտ եր դեկավարել բանվորների հեղափոխական անմիջական պայքարը, այն ժամանակ, յերբ բայց կեկներն այդ աշխատանքը կատարում ելին, սպեցիֆիկները բանվորական մասսաների հետ կապ չունեցող իրենց ինտելիգենտական

կան պետության ու արևմտյան իմպերիալիզմին, պայ-
քար են հայտարարում բայց կիզմի ու խորհրդակին իշ-
խանության դեմ:

Մայիսյան ապստամբությունից 18 որ հետո
Ենինականում հրավիրված իրենց կոնֆերանսում
«Հայտաստանի սոցիալ-դեմոկրատական ըանվորական
կուսակցության» անդամներն առանձին գոնունակու-
թյամբ խոսում են այն մասին, վոր իրենք ակտիվ
կերպով մասնակցել են մալիսյան ապստամբության
ձնշմանը: Նրանք իրենց կոնֆերանսում ընդունած
«տակտիկայի» մեջ հայտարարում են, «վոր իրենց կու-
սակցությունը կանգնած է միացյալ և անկախ Հա-
յաստանի պետականության տեսակետի վրա». իսկ
մենք արդեն խոսել ենք այն մասին, վոր միացյալ ու
անկախ (այսինքն կախված իմպերիալիստներից) Հա-
յաստանի լոգունդը՝ դա հայ բուրժուազիայի լոգունդն
եր հանդիսանում: Այդ կազմակերպությունը, վորն ա-
ռանց ամաչելու իրեն «սոցիալիստական» եր անվա-
նում, բայց կիսերի գեմ կովկելու համար հայտարա-
րում և Հայաստանի բոլոր հականեղափական կու-
սակցությունների հետ «համագործակցություն» ու
«համերաշխություն»:

Նա կոչ ե անում կովկել բայց կիսերի Խորհր-
դակին Ռուսաստանի գեմ, դաշն կուել լեվոպական ու
ամերիկյան իմպերիալիզմի հետ, վորը ըստ նրանց հա-
զար անդամ ավելի գերազանց ե, քան Խորհրդակին
Ռուսաստանը: Կոնֆերենցիան խոսելով հարևանների
մասին՝ հանդես ե բերում թթու աղքանականություն
ու թշնամական վերաբերմունք գեպի հարեան ժողո-
վուրդները:

փոքրաթիվ խմբակներով զբաղվում ենին «մարքսիզմի»
ուսումնասիրությամբ, կուլտ-կրթական ազգային բա-
րեգործական խնդիրներով: Սպեցիֆիկների գործու-
նիությունն այդպիսով սահմանափակվել ե նեղ ազ-
գանական բարեգործական, կուլտ-կրթական շրջա-
նակներով:

Հեղափոխության պարուությունից հետո ցարիզ-
մի գաժան տարիներում սպեցիֆիկների գործունելու-
թյունն ավելի և աննշան ե լինում. հեղափոխության
ու պատերազմի տարիներում սպեցիֆիկները գրկա-
խառնվում են դաշնակցականների հետ: 1918 թվին
Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո «Հայաստա-
նի կոմմունիստական կուսակցություն» անվան տակ,
սպեցիֆիզմը վերականգնվում ե (սեցիզիվ). Թիֆլի-
սում հիմնվում ե նրանց կենտրոնական կոմիտեն, վորը
դարձյալ զբաղվում ե ազգայնական, բարեգործական
խնդիրներով: Սակայն մեր կուսակցության կովկասյան
յերկրային կոմիտեն բացասական վերաբերմունք ե
ունենում գեպի այդ կազմակերպությունը: Թուրքերի
արշավանքի ժամանակ այդ կազմակերպության կեն-
տրոնական կոմիտեն փախչում ե Հյուսիսային կով-
կասի հայարնակ վայրեր՝ իր ազգայնական տիրապու-
տական գործը շարունակելու համար: Հետագայում սպե-
ցիֆիզմի մնացորդներն ու թափթափուկները (Բաշխի
Իշխանյան, Դավիթ Անանուն), դաշնակցական Հայա-
ստանում միանալով «անկախ սոցիալիստների» հետ,
նախկին իրենց ծրագրի հիման վրա Հայաստանում
հիմնում են «Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բան-
վորական կուսակցություն» ու ձեռք-ձեռքի տված դաշ-
նակցության հետ, պաշտպան կանոներով դաշնակցու-

Այսպիսով մենք տեսնում ենք՝ սպեցիֆիկյան այդ թափթփուկները սոցիալիզմի անվան տակ ծախում ենին դաշնակցական հականեղակոխոխական տեսակետները, բայց ավելի ճարպիկ ու խորածանկ կերպով։ Յեկ գա յերբեք զարմանալի չեր. սպեցիֆիկներն իրենց ամբողջ զոյլության ընթացքում յեղել են հայ բուրժուազիայի, Դաշնակցության գործիքը, նրա գողափարախոսության ազնաները։

ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱՎԱՆ ՏԵՍԱԿԵՑՆԵՐԸ.

Մեր մեծ ուսուցիչներ Մարքսն ու Ենգելսը «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք» լուսունգով սովորեցնում են, վոր ամբողջ աշխարհի բանվորների, բոլոր շահագործվողների շահերը միատեսակ են, վոր այդ շահագործվողները միայն վերջնականապես կարող են հաղթել իրենց դասակարգային թշնամիներին, յեթե միացալ ուժերով պատքարեն նրա գեմ։ Բանվորական շարժումը միացյալ ուժերով զեկավարելու համար բայլեկիները հնատելով Մարքսի և Ենգելսի ասածներին, թե մհանեիկների, թե բունդիստների դեմ պայքարելիս միշտ կանգնած են յեղել միաձուցլ ուժեղ պրոլետարական կուսակցության տեսակետի վրա։ Լենինից մի կուսակցության կազմակերպչական սկզբունքը յեղել ե զեմոկրատական կենտրոնացման ռեսակետը։ Բայլեկիները լինելով իսկական ինտերնացիոնալիստներ, պարզ ե, վոր կազմակերպչական խնդիրներում և հանդիսանում են ինտերնացիոնալիստներ։ Սպեցիֆիկները լինելով նացիոնալիստներ, կողմանակից չե-

նելով պրոլետարիատի դասակարգային պայքարին, այդ նացիոնալիզմը հանդիս են բերել նույնպես կաղմակերպչական խնդիրներում։ Երանք հակառակ բայլեկիների ասում եյին, վոր յուրաքանչյուր ազգության բանվորություն գտնվում է առանձնահատուկ (սպեցիֆիկ) պայմաններում, ունի առանձին շահեր, գրահամար այդ բանվորությունը պետք է անջատ կերպով կազմակերպվի, Բայ սպեցիֆիկների մուսասամանի սոցգենուկան բանվորական շարժման մեջ, դրա համար նրանք պայքարը են հայտարարում այդ սոցիալ-գենուկատական հայտարարական շարժման մեջ, դրա համար նրանք պայքարը են հայտարարում այդ սոցիալ-գենուկատական հայտարարական շարժման մեջ։ Հայ սպեցիֆիկները հրեական ազգայինական բանվորական շարժման մեջ մացնում բանվորական շարժման մեջ, դրա համար նրանք պայքարը են հայտարարում այդ սոցիալ-գենուկատական հայտարարական շարժման մեջ։ Հունական գենուկատական հայտարարի սոցիալ-գենուկատական մեջան ժիանուած կենտրոնացման սկզբունքը և դրա փոխարեն առաջազրում ելին փերացյալի ձեւը։

Շատերը կարծում են, վոր բայլեկիները և սպեցիֆիկները միայն կազմակերպչական խնդիրներում են իրարից տարբերվում. սակայն դա սխալ է, վորովհետեւ կազմակերպչական այն տարբերությունները, վորոնք գոյություն ունեն բայլեկիների և սպեցիֆիկների միշտ, առաջացել են զաղափարական սկզբունքալին տարբերություններից։ Սպեցիֆիկները վոչ միայն կազմակերպչական, նույնպես սկզբունքալին, տակտիկական, բանվոր դասակարգի պայքարի մասին ունեցած իր բոլոր տեսակետներով ու իրենց գործելակերպով տարբերվել են բայլեկիներից։

Սպեցիֆիկները, ինչպես մենք տեսանք, իրականում կողմանակից չեն յեղել դասակարգային պայքարին։ 1905 թվի արջանում, յերբ ամբողջ մուսասաման

նում և նույնպես անդրկովկտուտն կենտրոններում բարձրացել եր հեղափոխության ալիքը, յերբ բայցեղիկներն անսիջական կերպով դեկավարում ելին հեղափոխական շարժումը, սպեցիֆիկներն այդ ժամանակ զբաղված ելին չերկորողական վեճերով ու ազգային գործերով։ Այդ բավական չե, պրոլետարական մասսաների հեղափոխական գործողությունները համարում ելին «անարիխիստական» գլուխթներ և հայ բանվորության գլխին տերահերական իրատներ ելին կարգում հեղ լինել հեռու մնալ «անարիխիստական հովերից»։ Սպեցիֆիկները կազմակերպչական պարարի անվան տակ միշտ կռվել են «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» դեմ՝ համաձայն չինելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիստյալ հեղափոխական սոցայքարի, նրա տակտիկակի սկզբանքների հետ։

Սպեցիֆիկները միևնույն ժամանակ դեմ ելին սոցիալ-դեմոկրատիալ՝ ազգային հարցի մասին ունեցած տեսակետին, այդ ասպարիզում դեկավարվում ելին հայ բուրժուազիայի շահերով։ Այն վեճերը, վարոնք 1903 թվից տեղի ունելին բայցելիկների ու մենշևիկների միջև, սպեցիֆիկները համարում ելին ավելուրդ ու անտեղի վեճեր։

Սպեցիֆիկմը, վորպիս մանր բուրժուական, մեշչանական, ազգայնական մտածելակերպ ու գործելակերպ, չի ունեցել մշակված ու վորոշ հետևողական տեսակետ քաղաքական ալս կամ այն կարենը ինդրի վերտարյալ, զբա համար նա թափառել ե թե բունդիզմի, թե մենշևիզմի և դաշնակիզմի ախոռներում միշտ ել մնալով վորպես նացիոնալիզմի մի տեսակ։

ԲԱՅԼԵՎԵՎԻԿՆԵՐՆ ՈՒ ՍՊԵՑԻՖԻԿՆԵՐԸ.

1900 թվականից սկսված բանվորական շարժման շուղընթաց, Անդրկովկասում ևս իր գործունեցությունը ծավալում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիկան բանվորական կուսակցությունը։ Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան կազմակերպելով անդրկովկասուան բանվորությունը՝ գեկավարում ե այդ բանվորության հեղափոխական պայքարը, այդ պայքարը կապելով Ռուսաստանի բանվորական հեղափոխական շարժման հետ։ Միևնույն ժամանակ հեղ սոցիալ-դեմոկրատիան իր գործունեցության առաջին իսկ որից, ինչպես մը ւս վայրերում, նույնպիս և Անդրկովկասում անխնա պայքար և մղում նացիոնալիզմի դեմ։ Սպեցիֆիկան կազմակերպության առաջացման հետ միասին, բայց և իկոն անխնա պայքար են սկսում սպեցիֆիկմի դեմ։ Սպեցիֆիկներն իրենց համարելով հայ բանվորության «միակ արտահայտիչները», պայքարում ելին ՌՍԴԲԿուսակցության կազմակերպությունների դեմ՝ համարելով նրանց հյուսիսից յեկած, մեր իրականության անտեղյակ մարդիկ։ Սպեցիֆիկմի ամբողջ գոյության ընթացքում բայց լեկիցան մամուլն անխնա պայքար և մղում սպեցիֆիկների դեմ։ Բավական ե հիշել ընկ Շահումյանի, Կասյանի և մյուս ընկերների հոգվածներն սպեցիֆիկների մասին։ Ընկ Լենինը նույնպիս լիսատ կերպով արտահայտվում ե սպեցիֆիկների մասին։ 1905 թվի սեպտեմբերի 7-ին ընկ Լենինը Շվեյցարիայից մեր կուսակցության կենտրոնական կոմիտեներին գրած իր նամակում սպեցիֆիկների մասին գրում ե հետևյալը. «Կրկնապատիկ նախազգուշացնում

Եմ Զեղ «Հայկական սոցիալ-գենոկրատական ֆեոքրատիայի» վերաբերմամբ։ Յեթե զուք համաձայնել եք նրա մասնակցությանը կանֆերենցիալին, ապա ուրիշական մի սխալ եք արել, վորապիսին, ինչ դնով ել լինի, պետք է ուղղել։ Իրանք մի զուգը ու կենած ժընեվյան կազմակութիչներ են, վորոնք այստեղ ամենագատարկ բաներ են ճրատարակում, առանց վորհե լուրջ կապեր ունենալու կովկասում։ Այդ բունդին մի զործակալություն և և ուրիշ վոչինչ, վորը հատկապիս հորինված ե կովկասան բունդիզմ սնուցանելու համար։ Յեթե զուք թուլ տաք, վոր այդ զիրիլը մասնակցի սուրական կոնֆերենցիալին, այսինքն Ռուսաստանում գործող կազմակերպությունների կոնֆերենցիալին, զուք սարսափելի կերպով կիսայտառակիր։ Կովկասան ընկերները ամենքն ել զեմ են այդ զրականագիտ կազմակութիչների (այս շատերից եմ լուի) շայկալին, և մենք շուտով նրանց «Պրոլետարի» մեջ կծվաենք։ Դուք միայն տեսիր կտաք Կովկասի բուղոքներին և հաշտության ու «միավորման» փոխարեն՝ նոր գժոռություն կստեղծեք։ Ասացեք խնդրեմ, ինչուս կարելի չե անտես անել կովկասան միությունը, Ռուսաստանում աշխատող բազմաթիվ ընկերներին և բարեկարևանալ ժընեվան ճանձի տականքների հետ։ Արտապազին աղաջում եմ աղպես մի վարդեք։

Բնակ։ Լենինը վերոհիշյուլ տողերում վարպետորեն բնորոշում ե սպեցիֆիկների կազմակերպության իսկական դեյքը, նրանց անվանելով «զրական կազմալութիչներ», «գիրիլ», «կովկամյան բունդիզմ սնուցաներ» և այլն։

ՍՊԵՑԻՖԻԶՄԻ ՎՏԱՆԳԸ ՄԵԶԱՆՈՒՄ.

Այսպիսով մենք տեսանք, վոր բացի բալշեկիկներից ու մենշեկիներից գոյություն են ունեցել նաև սպեցիֆիկները։ Սպեցիֆիկան կազմակերպությունը, վորը ծնունդ ե առել 1903 թվին, հեղափոխությունից հետո սկսում է քայլայվել, լինում են փորձեր, ինչպիս 18 ու 20 թվին, այդ կազմակերպությունը վերականգնելու համար։

Ինչպես մենք տեսանք, 1920 թվին սպեցիֆիկների թափթփուկները զրկանականված դաշնակցականների հետ, կազմակերպում են «Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն», վորը կանգնում և բացարձակորեն հականեղափոխական զիրքերի վրա ու պայքարում ըալշեկիների դեմ։ Նոյյիմբերյան հեղափոխությունից հետո սպեցիֆիկան այդ կազմակերպությունը քայլայվում է, այդ կազմակերպության մի շարք զեկավարներ փախչում են արտասահման (Բաշխի Իշխանուան), իսկ մյուս մասը մնում է Հայաստանում և աշխատում է այս կամ այն միջոցով պայքարել խորհրդավին իշխանության դեմ, աշխատելով սովորող լերիտասարդության տատանվող շերտերին իրեն ազգեցությանը յենթարկել (որինակ, մարքսիստական խմբակներ և այլն)։ Սակայն սպեցիֆիկան կազմակերպության կազմակերպչական փոշիացումը գեռես չի նշանակում, վոր սպեցիֆիկմի վտանգը միզանում գոլություն չունի։ Սպեցիֆիկմի մի շարք սեցիզիմները (վերականգնումները) 18 և 20 թվերին) ցույց են տալիս, վոր սպեցիֆիկմի վերականգնուան հարավորությունները մեզանում զոյություն ունեն։

զրա համար կուսակցությունը վերջին շրջանում հատկապես ուշադրություն դարձնելով հականեղափական հիմնական վտանգի՝ դաշնակիզմի գեմ պատքարելու խնդրի վրա, միևնույն ժամանակ ուշադրություն դարձեց սպեցիֆիզմի գեմ պատքարելու կարեւության վրա:

Ներկայումս թեև սպեցիֆիզմը կազմակերպչորեն դուռը չունի, սակայն սպեցիֆիզմը, վորպես ազգայնական մանր-բուրժուական զործելակերպ, մտածելակերպ, վորպես նացիոնալիզմի մի տեսակ՝ գոյություն ունի մեր յերկրում և բոլոր միջոցներով աշխատում է իր ազգեցությունը տարածել: Մեր շինարարության ու գաղափարախոսության ասպարիզում վերջին տարիների ընթացքում յերևան յեկած մի շարք կոպիտ սխալները խոշոր չափով իրենց վրա կրում ելին սպեցիֆիկան մատճելակերպի ու զործելակերպի ազգեցությունը: Վերցնենք, որինակի համար, մեր տնտեսական շինարարության ասպարեզը, մեր սոցիուլիստական տնտեսությունը սերտարեն կապված է Խորհրդային Միության սոցիալիստական տնտեսության հետ. մեր կուսակցությունը տնտեսական շինարարության ասպարիզում դեկավարվում եամբողջ Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության հետանաբներով: Մենք մեր տնտեսական շինարարության մեջ զեկավարվելու յենք վաչ թե «ազգային փակ» տնտեսության լողունգով, այլ մեր տնտեսական շինարարությունը տանելու յենք սոցիալիստական շրջանացման պահանջներով:

«Ազգային փակ» տնտեսության կողմանիցները մեղանում, վորոնք արտահայտվում են բուրժուազիա-

յի ազգայնական տիսակետը տնտեսական շինարարության մասին, պահանջում են, վոր Խորհրդային Հայոստանն իր տնտեսական շինարարությամբ չկապվի Խորհրդային Միության հետ, վորպեսզի «անկախ» տընտեսություն ունենաւ. բայ նրանց պետք է կապվենք կապիտալիստական Յեկառապալի հետ: «Ազգային փակ» տնտեսության կողմանիցները միենույն ժամանակ ասում են՝ Խորհրդային Հայաստանը, վորպեսզի տնտեսապես անկախ լինի, նա պետք է ունենաւ արդյունաբերության բոլոր ճյուղերը, ինքը պետք է իր միջոցներով բավարարի իր բոլոր պահանջները: Մեր կուսակցությունը ժխտելով «ազգային փակ» տնտեսության տիսակետը, այս կամ այն վայրում արդյունաբերության այս կամ այն ճյուղերը զարգացնելիս նկատի յեւ ունենում մեր տնտեսության հեռանկարները, պահանջները և հնարավորությունները: Յեթե Ազգային ավելի եժան, ավելի նպատակահարմար ձեռվ կարելի յեւ ստանալ նավթը, Ազգային ավում զարգացնում են նավթարդյունաբերությունը: Յեթե Հայաստանում գոյություն ունեն պղնձի հանքեր, զարգացնում ե պղնձի արդյունաբերությունը, կամ յեթե Հայաստանում ավելի եժան և լավ վորակի շինանյութեր կարելի յեւ ստանալ, մշակում են քարի հանքերը: Այսինքն մեր Խորհրդային Միության ամբողջ սոցիալիստական տնտեսությունն աշխատում ենք ծրագրված սոցիալիզմի կառուցման պահանջների ու հեռանկարների համաձայն զարգացնել: Ազգային միենք տեսնում ենք՝ մեր կուսակցությունը տնտեսական շինարարության ասպարեզում ևս հանդես ե գալիս, վորպես ինտերնացիոնալիզմի միակ հետազական կիրա-

ոսպը: Տնտեսական շինարարության այդ շինաերնաւցիոնալիզմի ոգասկմբ և տեղական քանվորության ու աշխատավոր գյուղացիության համար, թէ վնասակար: Անպայման ոգտակար և, վորովհետեւ այդ շինարարությունը բղիսում և նրա գաւակարգային իրական շահերից, բացի այդ, չեթե մենք, որինակի համար, նաևթը մշակում ենք Բազվում և վոչ թե Հայաստանում կամ Վրաստանում, այդ նավթի մշակումը մեզ վրա ավելի եժան և նստում, մեր բանվորն ու գյուղացին իրենց արտադրանքը փոխում են մեր հարեան խորհրդացին հանրապետությունների բանվորների ու գյուղացիների հետ: Դաշնակները, մենչեկներն ու սպեցիֆիկները, վորոնք խոսում են մեր տնտեսության «անկախութան» մասին, զրանով արտահայտում և բուրժուազիայի տեսակետը, վորովհետեւ հայ բուրժուազիայի համար յերեք ձեռնուու չե այն սերտ տնտեսական կապը, վոր գոյություն ունի Խորհրդացին Հայաստանի և տմբողջ Խորհրդային Միության սոցիալիստական տնտեսության միջև: Մեր տնտեսությունն անկախ և արեմտյան կապիտալիզմից, իսկ բուրժուական այդ կուսակցությունները տնտեսական «անկախության» լոգունդի տակ թացյնում են իրենց խսկական ցանկությունները՝ մեր յերկիրը՝ զարձնելու կապիտալիստական Արևմուտքի զաղութներից մեկը: «Փակ ազգալին» տնտեսության տենդենցներ հանգես են յեկել նաև վերջին տարիների ընթացքում մեր շինարարության ասպարիզում: Կուսակցությունը վերջին շրջանում հայտնաբերելով մեր տնտեսական շինարարության ասպարիզում նկատվող ազգայնական սպեցիֆիկան ձգտումները՝ շեշտեց այդ թեքումների դեմ տնինա

պատքար մղելու անհրաժեշտության վրա: Կամ վերցնենք մեր շինարարության մի այլ ասպարիզը՝ ընակարանալին շինարարությունը մեզանում, ցուց տալու համար թե ինչպես նացիոնալիզմը, հետեւապես և սպեցիֆիզմի իր անդրադարձումն և ունեցել այդ բնագավառում: Մեր բանվորներից նրանք, ովքեր տեսուել են Յերևանի ու Լենինականի նոր շինած շենքերի մեծամասնությունը, Սարդարաբադի կալանը, Սանահնի բանվարական ակումբը և ալին, առաջին իսկ հայացքից, առանց ճարշարապետական պատրաստականություն ունենալու, կնկատեն այն նմանությունը, վոր գոյություն ունի մեր նոր շինած շենքերի ու վանքերի, հին բերդերի միջև: Մեր վանքերն ու բերդերը շինած են յեղել հայ կալվածատեղերի, իշխանների ու կրոնականների գասակարգային շահերի ու պահանջների համաձայն: Մեր յեկեղեցիները շինած են մուալ ու ներ պատուհաններով, վեր սլացող գմբեթներով, զարդարված են խաչերով ու զանազան կրոնական քոնդակներով, վորպեսզի այդ բոլորի միջոցավ կարողանան ավելի լավ ազգել հավատացյալների վրա, ցուց տալ գոյություն չունեցող տատծու ու Քրիստոնի գործությունը: Մեզանում նոյեմբերյան հեղափոխությունից հետո մեր ճարտարագետները փոխանակ մեր ընակարանները կառուցելու լուսավոր, բանվորների ու գյուղացիների առողջապահական պահանջների ու դասակարգային ճաշակի համաձայն, մեր նոր բնակարանները շինել են յեկեղեցիների ձևով: Այդ ճարտարագետները մեր տները շինելիս վոչ թե յեկավարվել են ճեղափոխության, այդ հեղափոխությունը կատարով նոր դասակարգի պահանջներով, այլ

զեկավարվել են ազգայնական տրամադրություններով ու մեր բնակարանները շինել են կարվածատերերի, տերտերների ու իշխանների ձաշակի համաձայն։ Այսպիսով մենք տեսնում ենք, թե նացիոնալիզմն ինչպիսի խորամանկ ձեերով սողոսկել ե մեր շինարարության ասպարեզը։ Կարելի յէ բազմաթիվ որինակներ բերել ցուց տալու համար, թե ինչպիս նացիոնալիզմը տարբեր առվակներով, թագնված կերպով աննկատելի աշխատում ե հոսել մեր կյանքի զանազան ասպարեզները և արդ նացիոնալիզմի ամենաթագնված, ամենախորամանկ ձեերից մեկը հանդիսանում ե ս զեցիփիզմը։ Սպեցիֆիզմը թագնված ձեով և հանդես զալիս, վորպիսպի հաջող կերպով կարողանա իր ազգեցությունը տարածել, վորպեսպի ավելի դժվար կերպով նկատվի։

Այսպիսով մենք տեսնում ենք՝ թեև հիմա սպեցիֆիների կազմակերպությունն այլևս գոյություն չունի, բայց սպեցիֆիզմի վտանգը, այսինքն մանր րուրժուական ինտելիգենտական ազգայնական մասնելակերպի ու զործելակերպի վտանգն ու նրա արտահայտությունները մեզանում զոյություն ունեն սպեցիֆիզմի վերականգնման հնարավորություններ (ուշացիփիլեր)։ Պրահամար յերբեք չպետք և աչքաթող անել այդ ու անինա կերպով պետք և պայքարել սպեցիֆիզմի գեմ։ Ամեն մի բանը լորից ու աշխատավոր գյուղացուց, լինի նա կուս սկցական թե անկուսակցական, պահանջվում ե գասակարգային գիտակցություն, վորպեսպի նա կարողանա ջոկել իր զասակարգի տեսակետները իր զասակարգի հակառակորդների տեսակետներից։

Այն բանգորն ու աշխատավոր գյուղացին, վորը չի կարող պրոլետարական ինտերնացիոնալիզմի, լեռնինիզմի տեսակետներն ու գաղափարները տարբերել բուրժուական կուսակցությունների, նացիոնալիստների, սպեցիֆիկների տեսակետներից, հեշտությամբ կարող ե ընկնել իր հակառակորդների ազգեցության տակ, իսկ այդ հակառակորդները դեռևս իրենց դասակարգային շահերը լավ չզիտակցող բանվորներին ու գյուղացիներին հաշտությամբ խարելու համար մեջտեղ են գալիս թագնված կերպով։

Սպեցիֆիկների մասին մեզանում տարածված են յեզիր զանազան սխալ տեղեկություններ այն ուղղությամբ, վոր իբր թե սպեցիֆիկները լեզել են նույն բալշեկները, միայն կազմակերպչական խնդիրներում են տարբերվել բայցեկներից։ Ազդ տեսակետն սխալ ե, վորովհետեւ մենք քննության յենթարկելով սպեցիֆիկների ամբողջ պատմությունն ու գործունելությունը, տեսանք, վոր սպեցիֆիկները վոչ միայն կազմակերպչական, այլ բոլոր հիմնական խնդիրներում տարբերվել են բայցեկներից, ու բայցեկների ու սպեցիֆիկների միջև վոչ մի կազմակերպչական ու գաղափարական կապակցություն գոյություն չի ունեցել։ Բայցեկները միշտ պայքարել են սպեցիֆիկների վեմ։ Սպեցիֆիզմի գեմ հաջող պայքարելու համար անհրաժեշտ ե՝ մեր բանվորներն ու աշխատավոր գյուղացիները ճիշտ պատկերացում ունենան նրա եյության, նրա անցյալի ու նրա հակառակափոխական գործունեյության մասին։

Ինչպիս միքանի անգամ տսել ենք, դաշնակիզմ, սպեցիֆիզմ, մենշենիզմ, տրոցիզմ ու բոլոր պիտի

հականեղափոխական հոս ռնքներն ու կուսակցությունները մեր պալմաններում զաղափարապես ու կաղմակերպչուն միաձուլվելով ու փոխազդելով իրար վրա, նացիոնալիզմի դրոշի տակ կազմում են միացյալ ֆրոնտ, թե կաղմակերպչորեն և թե զաղափարապես պարագում են բազկիզմի, պրոկտարական ինտերնացիոնալի դեմ: Մեզանում տարվող բոլոր աշխատանքները, թե անտեսական շինարարության, թե կուլտուրական շինարարության, թե զաղափարական պարագման հիմնական նպատակը, միենույն ժամանակ պետք է ուղղվեն նացիոնալիզմի ու նրա տարրեր տեսակների դեմ: Թե մեր անտեսական շինարարության, թե մեր մամուլի և թե մեր զաղափարական բոլոր առորդա ու հիմնական աշխատանքների ընթացքում պետք ե անխնա ու սիստեմատիկ ոլայքար մղել նացիոնալիզմի դեմ, լինել վոչ թե պաշտպանվողի, այլ հարձակվողի գերում: Բազկեիկյան ամուր ցեմենտով ծածկել այն բոլոր ձեղքերը, վորտեղից նացիոնալիզմն անհկատելի կերպով կաթիլ առ կաթիվ աշխատում և հոգել մեր կյանքի տարրեր ավաղանները:

Կոմմունիստական կուռակցության անշեղ զեկավարությամբ նացիոնալիզմի ու հականեղափոխական կուսակցությունների դեմ մղված այդ պայքարին լայն կերպով պետք է մասնակից դարձնել մեր բանվորական մասսաներին ու աշխատավոր գյուղացիությանը, խորհրդավին ինտելիգենցիային ու կոմմունիստական վերիւտարգությանը:

Մեր բանվորական ու աշխատավորական լայն մասսաներին մասնակից դարձնելով նացիոնալիզմի դեմ մղվաղ բայլշեիկյան պայքարին, հնարավոր կլինի ավելի հաջող ու ավելի ամուր հմարելի վրա կազմակերպել այդ մասսաների իններնացիոնալիստական դաստիարակության գործը:





SPRING 12 1929.